ՍԱՐԳԻՍ ԵՊՍ. ՍԻՒՆԵԱՑ.— Ստեփանոս Օրբելեան պատմիչը կը վկայէ թէ՝ Սարգիս եպս. ուխտաւորութեամբ այցելած է Երուսաղէմ և երեք ընկերներով նահատակուած է Քրիստոսի գերեզմանին մօտ. «.. Եւ ապա առեալ Խորազմին զԵրուսաղէմ ի փառանդէն՝ կոտորեաց սաստկապէս, և ելից զտաճար տեառն արեամբ, և գտեալ զերանելի եպսն զՏէր Սարգիս ի վերայ գերեզմանին Տեառն ի սաղմոսերգութեան այլ ևս երեք ընկերօք՝ հատին զգլուխն և հեղին զարիւն ի վերայ գերեզմանին տեառն կափարչին, և այսպէս մարտիրոսական արեամբ պսակեցաւ ի Քրիստոսէ Աստուծոյն մերոյ» (Օրբէլ. Հատ. Բ. էջ 89 և 108, նաև Արարատ, 1890, էջ 329)։

Սարգիս եպս. որ քսան տարի վարած է Սիւնեաց եպիսկոպոսութիւնը, (Միասկան, էջ 20) հաւանաբար այցելած է Երուսաղէմ 1244ին, երբ Խորոզմեանք գրաւեցին Երուսաղէմը, աջակցութեամբ Եգիպտոսի սուլթանին, ինչպէս կը գրէ Օրբէլեան, և այդ տարին նահատակուած է Ս. Յարութեան տաճարին մէջ։

Աւանդաբար կը կարծուի թէ Սարգիս եպս. իր հետը Երուսաղէմ բերած էր կենաց փայտի այն մասը զոր սիւնեաց տիկինը՝ Բիւրեղ իբր պարգեւ ընդունած էր Հերակլ կայսրէն։ Սարգիս եպս. Փառանկէ մը գնելով Ս. Ստեփանոսի աջը՝ Երուսաղէմէն ընծայ կը ղրկէ իր Նորավանք ուխտին։ Նոյն մասունքին վրայ կար վկայութիւն մը Ֆրանկ, ասորի եւ հոռոմ գրով (Օրբէլ, Բ. էջ 89)։

ՍԱՐԳԻՍ ԵՊՍ. ՍԻՒՆԵԱՑ.— Օրբելեան ցեղէն եւ Ստեփանոս եպս. Տարսայիճի յաջորդը (Բանքեր, էջ 196). իր մասին տեսնել (Միասկան, էջ 20). 1337ին կ'այցելէ Երուսաղէմ և այս առթիւ իր արդեամբը կ'ստանայ ձեռագիր մագաղաթեայ այն սաղմոսարանը (ՄՋ. Թ. 1033), որ ՉԾԵ (=1306) թուին ընդօրինակուած էր Կիպրոսի Ճիպս գիւղի Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ Լեւոն երէցի գրչութեամբ և 32 տարիէ իվեր կը մնար Ս. Յակոբի վանքը. Սարգիս եպս. իր ուխտաւորութիւնը կատարելով կը մեկնի Սիւնիք եւ կը շարունակէ իր պաշտօնը, նոյն ձեռագիրին յիշատակարանէն յայտնի կ'ըլլայ իր ուխտաւորութիւնը եւ ձեռագիրին ստացող ըլլալը. «... սա (Սարգիս